

ՀԱՅ ԵՐԳԻ ՏԱԳՆԱՊԸ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Բ

Երևապոլմ, 14 Նոյեմբեր 1953

Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւոր

Ամման

Ազգային կիանրի մէջ կարգ մը տրտում երեւոյթներ մատնանշելէ ետք Նոյնրան տրտում պարագայ մըն է նաեւ յիշել երաժշտութեան նահանջը: Պիտի ուզէինք որ ասպարէզին հանգամանաւ որ մարդիկը, կամ երաժիշտները մատնանշէին ու խօսուին, բայց Թող Ներուի մեզի քանի մը խօսք բռնէ, ճշմարիտ տազնապ իը ներկայացնող տրտում երեւոյթի մը առջեւ:

Անուասիկ 40 տարիներու կը մօտենայ այն անջըրպեաբ որ մեզ կը բաժնէ մեր պատմութեան մէջ ամենամութ էջը կազմող 1915 թուականէն ու տակաւին մարդիկ գոյութիւն ունին որոնք աշխատանքէն վերադարձին, գործի ընթացքին, պարապոյ ժամերուն, սննեակներնուն մէջ կ'ախորժին թրքական երաժշտութիւն մտիկ ընելէ: Կը հեշտանան թուրք երաժշտութեան երկարածիգ, ոլորուն, պորտախաղերու եղանակներէն: Նը մտածեն, կ'արտայայտուին ու Նոյնիսկ . . . կը հայհոյեն թուրքերէն:

Թրքաբարոյ եւ թրքավարի այս խոտելի ականջի, թերնի վարժութիւնն է որ միանգամընդմիշտ պէտք է ի բաց վանել. հակառակ ատոր, ատեն ատեն կը լսենք, ականատես կ'ըլլանք թրքական կամ օտար ազգեցութիւններու որոնք մեր ինքնութիւնը կը խաթարեն:

Որքա՞ն ախորժակով կ'երգեն օրինակի մը համար շեկուր եկուր՝ կոչուած նոր եւ անիմատ երգը, որ իբր թէ ժողովրդական երգ մըն է: Ինչպէս որ գրականութեան մէջ գոյութիւն ունի շեկոյժ զասականն կոչուած արուեստ մը, Նոյն ծեւով ալ երաժշտութեան մէջ կան շեկոյժ ժողովրդական երգեր: Այնրան առատ եւ հարուստ է մեր ժողովրդական երաժշտութիւնը այս տեսակէտէն որ օրինակներ տալ անկարելուր կը սեպենք:

Ասան է որ թօթափներ օտարամուտ ազգեցութիւններ, չնթարկուինք անոնց ճաշակի եւ հասկացողութեան զորացումով, թօթափներ մանաւանդ . . . թրքաբարոյ ազգեցութիւններ:

Զ

Ձերդ Վեհափառութեան ճննդեան բարեաստիկ ցարեղարձին առքիւ կը ներկայացնենք Ձեզ մեր Միաբանութեան եւ Յուդանանի մերազ ժողովուրդին արսպին շնորհաւորութիւնները եւ կ'աղօթենք որ Տերը պարգեւէ Ձեզ Երկար եւ Երջանիկ ցարիներ:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԷՄԱՀԱՅԱՆ Վասն Տեղապահի Ս. Արքուոյ

Արեւոյնք Ամմանի, 14 Նոյեմբեր 1953

Գեր. Տ. Սուրեն Եպս. Քեմհանեան

Հայոց Պատրիարքան

Երուսաղէմ

Նորին Վեհափառութիւն Թագաւորը շնորհակալութիւն կը յայտնէ Ձեր ազնիւ մաղթանքներուն համար:

Արեւոյնք Իլուանապետ

Երուսաղէմ, 15 Նոյեմբեր 1953

Նորին Վասնուրբին

Լիազօր Պատուիրակ Սաուելի Արաբիոյ

Ամման

Հանցեցէ մեր Միաբանութեան եւ Յուդանանի հայ գաղութին խօրին ցաւակցութիւնները հալորդել Նորին Վեհ. Սեուր Իպն Ապսուլ Ազիզ Թագաւորին, իր մեծանուն հօր անդարմանելի կորուստին առքիւ: Կ'աղօթենք Բարձրելոյն որ Երկար եւ Երջանիկ կեանք պարգեւէ նոր քաղաւորին ի փառս Արաբիոյ ժողովուրդին:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ Պատր. Տեղապահ Ս. Արքուոյ